

ՏԱԹԵՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

(ԵՊՀ)

«ՆԱՀՋ ԱԼ-ԲԱԼԱԳԱ»¹ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԱՍՈՒՑԹՆԵՐԻ ԵՎ ԻՄԱՍՏՈՒՆ ԽՈՍՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Նահջ ալ-բալաղան ուղղահավատ չորրորդ խալիֆ և շիա իսլամի առաջին Իմամ Ալի իբն Աբի Տալիբի (մահ 661 թ.) խուսրանների՝ (241 քարոզ, ճառ, հրահանգներ), ուղերձ-նամակների (79) և ասույթների, իմաստուն խոսքերի (480) մի ընտրանի ժողովածու է²: Ալի իբն Աբի Տալիբին պատկանող նյութը բանավոր երկարատև փուլ է անցել (ավելի քան երեք դար) և ժողովրդական բանահյուսության մեջ հետագա մշակումների ընթացքում, որոշակի հավելումների և փոփոխությունների ենթարկվելով, հատվածաբար գրի է առնվել, իսկ արդեն 10-րդ դարում՝ միջնադարյան հայտնի գրականագետ, բաղդադյան միջավայրի հայտնի բանաստեղծ և շիա գրող ալ-Շարիֆ ալ-Ռադիին (970-1015/16 թթ.) այն հավաքագրում է մեկ աշխատության մեջ: Հավաքագրման մասին մանրամասն տեղեկություններ է պարունակում հենց ալ-Շարիֆ ալ-Ռադիի կողմից գրված Նահջ ալ-բալաղայի նախաբանը³, որում նա նշում է, որ «ճարտասանության և հոետորու-

¹ Արաբերենից nahğ (*նահջ*) թարգմանաբար նշանակում է 1) ուղի, ճանապարհ, 2) մեթոդ, միջոց, 3) արվեստ, իսկ balāğā (*բալաղա*)՝ 1) հոետորություն, 2) ճարտասանություն, հոետորություն: Ժողովածուն ճարտասանության/հոետորության արվեստ/ուղի:

² Մեր ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք Նահջ ալ-բալաղայի հետևյալ հրատարակությունից՝

نهج البلاغة من كلام أمير المؤمنين أبي الحسن علي بن أبي طالب عليه السلام/و هو ما اختاره الشريف الرضي. قم: أنصاريان، 2004، ص. 653.

³ Նահջ ալ-բալաղայի ալ-Շարիֆ ալ-Ռադիի նախաբանի մասին առավել մանրամասն տես Մկրտչյան Ս., Nahğ al-Balāga-ի հավաքագրման, վերնագրման, բովանդակության ընտրության և կառուցվածքային որոշ հարցերի պարզա-

թյան չափանիշներից ելնելով ընտրության արդյունքում հավաքագրել է (1009/1010 թ.) մեկ ամբողջական գրավոր հուշարձանում Ալի իբն Աբի Տալիբին պատկանող նյութից լավագույնները»։ Նա նախաբանում գրում է, որ Ալի իբն Աբի Տալիբի խոսքերը երեք գլուխների է բաժանել ամբողջ նյութը հավաքագրելուց հետո՝ الخطب و الاوامر (քարոզներ և ճառեր), երկրորդ, (الرسائل و الكتب) ուղերձներ և նամակներ), և երրորդ, الحكم المواعظ (իմաստուն խոսքեր, ասույթ-իմաստություններ)⁴։

Հոդվածում քննարկվում է ժողովածուի երրորդ բաժնի՝ ասույթների, խրատների, իմաստուն խոսքերի և իմաստնությունների կառուցվածքային և բովանդակային որոշ առանձնահատկություններ։ Համեմատական վերլուծություն է արվում Աբու Ուսման ալ-Ջահիզի (776-868 թթ.) կողմից հավաքագրված իմամ Ալի իբն Աբի Տալիբի «Հարյուր խոսքի» (مائة كلمة / Mi'at Kalima)⁵ և Նահջ ալ-բալադայի երրորդ բաժնում հավաքագրված ասույթների և իմաստնությունների միջև։

Նահջ ալ-բալադան երկու հիմնական առանձնահատկություն ունի, որը գրեթե բոլոր հեղինակներն ու ուսումնասիրողները նշում են. արձակ ժանրում գեղարվեստական հոետորության և ճարտասանության (*Ֆասահա* և *բալադա*) տեսանկյունից փայլուն մի նմուշ է, և մյուսը՝ նրա բովանդակային ընդգրկուն և բազմակողմանի բնույթն է։

Նահջ ալ-բալադան գիտական տեսանկյունից երկու հիմնական մոտեցմամբ է ուսումնասիրվում։ Առաջինը, որպես Ալի իբն Աբի Տալիբի մտքեր ու տեսակետներ՝ խոսույթ, շիայական դավանաբա-

բանումը՝ ըստ հավաքագրող-հեղինակ ալ-Շարիֆ ալ-Ռադիի նախաբանի, Արևելագիտության հարցեր, հ. XI, Երևան, 2016, էջ 50-65։

⁴ St' u Nahj al-balagha, Mukaddima, Sharif al-Radi, p. 8-9.

⁵ Այս աշխատությունն իր մեջ ներառում է Ալի իբն Աբի Տալիբին վերագրվող 100 իմաստուն խոսք/նախադասություն, ասացվածք, խրատ, որը հավաքագրվել է ալ-Ջահիզի կողմից։ Այս աշխատության թարգմանությունը կատարել է Տահերա Քութբուդդինը, Al-Qudā'ī Al-Qāḍī, A Treasury of Virtues: Sayings, Sermons, and Teachings of 'Ali, with the One Hundred Proverbs attributed to al-Jahiz, (ed. and trans. Tahera Qutbuddin), New York and London: New York University Press, 2013.

նական ավանդույթ, որը արդիական է մինչ օրս մուսուլմանական համայնքի (մասնավորապես՝ շիա տասներկուականների) համար: Իսկ եկրորդը, հեղինակային ճշմարտացիությանն առնչվող կասկածներին և հարցերին ի պատասխան աղբյուրագիտական ուսումնասիրություններն են կազմում: Այսինքն առաջին մոտեցմամբ ուսումնասիրողները ելնում էին տեքստի բովանդակային վերլուծության միջոցով տվյալ ժամանակաշրջանի՝ թե՛ հեղինակի, և թե՛ հեղինակ-հավաքագրողի աշխարհընկալումից և չափանիշներից: Իսկ երկրորդ մոտեցմամբ, նրանք ելնում էին յուրաքանչյուր տեքստի հեղինակային պատկանելությունը և պատմական իրողությունների ճշմարտացիությունը ապացուցելու ելակետերից:

Մեր դիտանկյունից, սակայն, Նահջ ալ-բալադան ոչ միայն Ալի իբն Աբի Տալիբի ժամանակաշրջանի խոսույթի ու «աշխարհայացքի» արտահայտությունն է, այլև ինքնին պատմական աղբյուր է նախ և առաջ հեղինակի՝ Ալի իբն Աբի Տալիբի ժամանակաշրջանի իրադարձությունների և պատմական կերպարների տեսանկյունից, ինչպես նաև ֆոլկլորային մշակումների արդյունքում Ալի իբն Աբի Տալիբի, նրա ժամանակաշրջանի «աշխարհընկալման» մի յուրահատուկ «մեկնաբանություն», որը ներկայացվում է հավաքագրող հեղինակ ալ-Շարիֆ ալ-Ռադիի կողմից: Նահջ ալ-բալադան այսօր Ղուրանից հետո երկրորդ «սուրբ գիրք» է համարվում շիայական՝ տասներկուական համայնքի համար:

Նահջ ալ-բալադան, փաստորեն, ոչ միայն հեղինակի՝ Ալի իբն Աբի Տալիբի ժամանակահատվածի, մասնավորապես շիայական աշխարհընկալման բովանդակության ներկայացումն է, այլև շիայական աշխարհընկալման սկզբնավորման և առաջին իմամ Ալի իբն Աբի Տալիբի տեքստի միջոցով նաև հավաքագրող-հեղինակի՝ ալ-Շարիֆ ալ-Ռադիի ժամանակահատվածում դրա կարևորության արտահայտությունն է:

Այս աշխատանքը և դրա ուսումնասիրությունը ենթադրում է բազմաշերտ հարցերի պատասխանների որոնում: Դրանցից են

տեքստի հեղինակության հարցերը՝ հեղինակ - հավաքագրող-հեղինակ - հավաքական հեղինակություն, բանավոր տեքստից (իսլամի սկզբնավորման փուլ) գրավոր տեքստի վերածման ընթացքը, շիայական կրոնադավանաբանական ուսմունքի ձևավորման գործընթացում գրի առնման ժամանակահատվածը⁶, որը շիայական ավանդույթի ներսում տեղի ունեցող կարևորագույն փոփոխությունների շրջան էր⁷:

Այս ամենը հաշվի առնելով, աղբյուրագիտական ուսումնասիրության համար նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել տվյալ նյութի բանավոր փոխանցման ավանդույթի առանձնահատկությունները: Հայտնի է, որ հին արաբական հասարակական գործունեությանը հատուկ էր կոլեկտիվ հիշողության մեջ նախորդ սերունդներից ժառանգած նախնիների իմաստության և փորձի մասին հստակ ու մանրակրկիտ ինֆորմացիայի պահպանումը և փոխանցումը, որն

⁶ Աբբասյան խալիֆայության շրջանում Բուիների (945-1055 թթ.) գերիշխանության փուլում, որը գիտական գրականության մեջ հայտնի է որպես «շիա իսլամի դարաշրջան» և/կամ «իսլամական վերածննդի» նաև «իրանական ինտերմեցցոյի» դարաշրջան, շիա իսլամի գաղափարախոսական աշխատություններ ստեղծելու, իրենց նախնիների ժառանգությունը գրավոր դարձնելու և հետագա սերունդներին թողնելու ամենանպաստավոր ժամանակաշրջանն ու փուլն էր համարվում: Բուիների ժամանակաշրջանի մասին տես՝ Cahen C. and Pallet Ch., “Buwayhids or Buyids”, Encycloaedia of Islam 2, Vol 1, p. 1350-1357, Mottahedeh R., Loyalty and Leadership in an early Islamic society, I.B. Tauris, 2001, Kraemer J. L., Humanism in the Renaissance of Islam: The Cultural Revival During the Buyid Age, Paperbacks B., 1992, Donohue J. J., The Buwayhid Dynasty in Iraq 334H./945 to 403H./1012, Shaping Institutions for the Future, Brill, 2003. Minorsky V., “The Iranian Intermezzo,” in Studies in Caucasian History, p. 110- 116.

⁷ 874 թ. 12-րդ իմամ Մուհամմադ իբն ալ-Հասան ալ-Մահդիի թաքուցումից հետո՝ փոքր թաքուցման (*ալ-դայրա աւ-սուլթա*) փուլից և հատկապես մեծ թաքուցման (*ալ-դայրա ալ-քուրրա*) շրջանում է սկսվում շիայական կրոնագիտական շրջանակներում սեփական կրոնաիրավական դպրոցի ներսում իմամների ավանդույթի կանոնիկացման գործընթացը: Քանի դեռ կենդանի էին համայնքի ղեկավար իմամները, շիայական համայնքի կողմից ամբողջությամբ չէր գիտակցվում շիայական ավանդույթի՝ խաբարների կանոնիկացման կարևորությունը:

Էլ հիմնվում էր բանավոր փոխանցման համակարգի վրա՝ հիմքում կրելով երկար տարիների ընթացքում մշակված ընտրության, պահպանման և տվյալ ինֆորմացիայի աղավաղման հնարավորությունների բացառումը (աբեռացիա) տվյալ համակարգի ներսում⁸։ Աբեռացիայի սկզբունքը, ոչ թե խեղաթուրման սկզբունք է, այլև տվյալ նյութի տեքստի-բովանադակության ձևափոխված փոխանցում՝ հեղինակի կողմից ընկալման, իմաստավորման արդյունքում։ Աղբյուրագիտական տվյալ հարցադրումները և խնդիրները սերտորեն առնչվում են ժանրային կառուցվածքային խնդիրների հետ։ Օրինակ, ինչու և ինչպես է ձևավորվում տվյալ ստեղծագործության ժանրային կառուցվածքը։ Հետաքրքրական է, որ իմամ Ալի իբն Աբի Տալիբին պատկանող նյութը ժանրային առումով երեք ձևերով է փոխանցվում՝ քարոզների, նամակներ-ուղերձների և իմաստնությունների, իմաստուն կրճատ ասույթների, որոնք արաբամուսուլմանական գրական ավանդույթում զարգացման իրենց ուրույն հետագիծն ունեն։

Ժողովածուի երրորդ բաժնի՝ իմաստուն խոսքերի և ասույթների ուսումնասիրության համար ընտրվել է ֆոլկլորային տեքստի վերլուծության չափանիշները։

Ֆոլկլորային տեքստը համայնքի, էթնոսի, որևէ խմբի որպես մեկ ինքնություն ունեցող միավորի՝ էթնոկոնֆեսիոնալ, էսթետիկ, մենտալ, արժեհամակարգի և աշխարհայացքային ընկալումների ոչ ավարտուն անընդհատ զարգացող ու փոփոխվող մի տեքստ է⁹։

Ֆոլկլորային տեքստի իմաստավորումը և ուսումնասիրությունը կարելի է իրականացնել մի քանի տեսանկյունից, որոնցից յուրաքանչյուրը շատ կարևոր է տվյալ խմբի ինքնության այս կամ այն շրջանի աշխարհայացքային և արժեքային իրավիճակը հասկանալու

⁸ Այս մասին մանրամասն տե՛ս Оганесян Д., К вопросу об истинности и «правдоподобности» поэтического высказывания, Арабская филология, вып. 3, сборник статей, посвященный 50-летию Института восточных языков, Москва, 2008, с. 209-210.

⁹ Ֆոլկլորային տեքստի տեսակների մասին տե՛ս Пропп В. Я., Фольклор и действительность, Москва, Наука, 1976, с. 16-45.

համար: Ֆոլկլորային տեքստը կարելի է դիտարկել իր պատմամշակութային ծագումնաբանական տեսանկյունից, ժանրային և սեմանտիկ առանձնահատկություններով, ինչպես նաև արժեքաբանական տեսանկյունից: Ֆոլկլորային տեքստը պետք է ուսումնասիրել «սեմիոզիսի» շրջանակներում, որը դիտարկում է տեքստը ոչ միայն որպես մեկ անկախ ամբողջական միավոր, այլ այն դիտարկում է որպես մշակութային տարածության մեջ տարրալուծված մի երևույթ¹⁰: Ֆոլկլորային տեքստն ավանդույթի այս կամ այն կայուն տարրերի տվյալ տեքստի շրջանակներում ավարտուն համագումարն է, որի յուրաքանչյուր կատարում ունենում է տարբեր մոդելավորումներ:

Համառոտ ներկայացնենք, թե որոնք են ֆոլկլորային տեքստի միավորները՝ պարեմիաները: Դրանք բազմաշերտ, լեզվական և տրամաբանական միավորներ են, այս կամ այն մտքի արտահայտություններ, գեղարվեստական մինիատյուրաներ, իրականության այս կամ այն իրողության վառ և որոշակի ձևով արտահայտումներ¹¹:

Պարեմիալոգիան բարդ կոնստրուկտների հետ գործ ունի, որոնք տարբեր հարթություններ ունեն. որպես լեզվական միավորներ՝ կայուն կառուցվածք, որպես տրամաբանական միավորներ՝ դրանք առնչվում են մտքի հետ, իսկ որպես գեղարվեստական միավորներ՝ իրականության/իրողության վառ կերպով մոդելավորումներ են¹²:

Տարբեր ժողովուրդների մոտ միևնույն մտքի տարբեր արտահայտությունների առկայությունը վկայում է այն մասին, որ յուրաքանչյուր տրամաբանական/ավարտուն մտքի բոլոր տրանսֆորմացիաները, մոդելները, տարբերակները կազմում են կյանքի և տեսական բոլոր ենթադրյալ հավանական իրավիճակներ: Այս կամ այն տարբերակները ցույց են տալիս տրամաբանական բովանդակության ինչպես նաև իրական կյանքի տարբեր երևույթների միջև փոխհա-

¹⁰ Лотман Ю. М., Внутри мыслящих миров. Человек-текст-семиосфера-история, Москва, 1996.

¹¹ Пермяков Г. Л., Основы структурной паремиологии, Москва, 1988, с. 13-14.

¹² Նույն տեղում:

րաբերությունների տարբերությունները: Ֆուկլորի հիմքում ընկած է իմպրովիզացիան՝ ավանդույթի շրջանակում: Դրանով պայմանավորված՝ ասույթների միտումնավոր ձևափոխումները և բեկումները տվյալ տեքստի կայունությանը չեն հակասում, այլև ցույց են տալիս, որ բազային ասույթները (ինվարիանտ) յուրաքանչյուր լեզվակիր-հեղինակ կարող է ձևափոխել՝ նոր տարբերակներ ստեղծելով: Յուրաքանչյուր ասույթ ունի իր կերպարների հավաքակազմը՝ տեղային և ժամանակային իրողություններով և առանձնահատկություններով պայմանավորված:

Մշակութային կոդ-լեզուն աշխարհընկալում է, աշխարհայացք. լեզվակիր-հեղինակը պետք է կառուցի իր մտքի բովանդակությունն այդ աշխարհընկալման շրջանակում: Աշխարհայացքը և աշխարհընկալումը լեզվական ձևակերպումներ են ստանում իրենց հատուկ կերպարների, էտալոնների, արքետիպերի, միֆոլոգեմների, խորհրդանիշների և այլնի համակարգում:

Ասույթը իրավիճակների նշան է կամ տարբեր երևույթների միջև որոշակի փոխհարաբերություն: Հիմքային արտահայտությունից՝ *ինվարիանտից* տեղի է ունենում կոնստրուկցիայի փոփոխություններ՝ ձևավորելով *վարիանտներ*՝ տարբերակներ, իսկ իրավիճակների դասակարգումը հանգեցնում է *ինվերսիաների*՝ այսինքն միմյանցից կախվածության մեջ եղած անդամները պարզապես փոխում են իրենց տեղերը¹³:

Նաև չալ-բալադայի երրորդ մասի իմաստությունները և ասույթները բացի ֆուկլորային տեքստ լինելուց նաև դարձվածաբանական միավորների համագումար են: Դարձվածաբանական միավորները հիմնականում ուղղված են դեպի սուբյեկտ, այսինքն դրանք ոչ միայն նպատակ ունեն նկարագրելու աշխարհը, այլև այն մեկնաբանելու, գնահատելու և սուբյեկտիվ մոտեցումներ ցուցաբերելու համար են: Դարձվածաբանական միավորների իմաստային նշանակությունը սերտորեն առնչվում է լեզվակրի ֆոնային գիտելիքներին,

¹³ Пермяков Г. Л., նշվ. աշխ., էջ 22:

անհատի փորձառության, տվյալ լեզվով խոսող հանրության/համայնքի պատմամշակութային ավանդույթներին:

Դարձվածաբանական միավորները օբյեկտներին վերագրում են այնպիսի հատկանիշներ, որոնք ասոցացվում են աշխարհընկալման հետ, միևնույն ժամանակ ենթադրում են ամբողջական նկարագրողական իրավիճակ/տեքստ և գնահատում են այն: Իրենց սեմանտիկայով՝ իմաստային բեռնվածքով, դարձվածաբանական միավորներն ուղղված են մարդու և նրա գործունեության բնութագրմանը:

Ժանրային ձևափոխումները և զարգացումներն ընթանում են ներավանդութային ձևափոխումների համատեքստում, ժանրային կառուցվածքի հնարավոր ձևափոխումների կտրվածքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ալի իբն Աբի Տալիբի խոսքերը կարելի է դիտարկել տվյալ ժամանակաշրջանի մշակութային, քաղաքական, պատմական, կրոնական և սոցիալական իրադրությունների արժեքանական ներկայացում՝ տվյալ ժամանակաշրջանի ժանրային առանձնահատկությունների համատեքստում: Սակայն, լինելով բանավոր ավանդույթ, գրավոր ձևակերպումն ընթացել է այնպիսի գործընթացներին զուգահեռ, երբ Մուհամմադ մարգարեից հետո արաբականացումը և իսլամականացումը նոր մուսուլմաններին ապահովեց *իլմով*՝ աստվածային գիտելիքով, նոր արժեհամակարգով, մշակութային կոդով, իսկ նոր մուսուլմաններն էլ իրենց հերթին ներմուծեցին *ադաբը*՝ քաղաքակրթական նորմեր, երբ քաթիբների դասը իսլամի ընդունումից հետո սկսեց ձևափոխվող հասարակության նոր սերունդը դառնալ: Նրանք իրենց քաղաքակրթական հմտությունները, կառավարման դարավոր փորձը, ժառանգած հնագույն մշակութային ավանդույթները պահպանելով՝ դրանք ներմուծեցին նոր ձևավորվող արաբամուսուլմանական ժառանգության մեջ: Մեծ է նաև տվյալ ժամանակաշրջանում առկա մութագիլիականության¹⁴

¹⁴ Մութագիլիականությունը արաբ. *իթագալա*՝ անջատվել, առանձնանալ բայից է և ստացել է իր անվանումը այն ժամանակ, երբ մութագիլիականության հիմնադիր Վասիլ իբն Ատան (մահ. 748)՝ վիճելով մեղքի էության

դերը, որը կարծես հիմք դրեց «բանականության» և մուրուվայի¹⁵ մարդկանց, *ալլ* և սուննա հակասություններին, և ընդհանուր առմամբ ամրապնդեց մութագիլիականության համար բանականությամբ առաջնորդվելու սկզբունքը հետագա աստվածաբանական բանավեճում՝ հակադրվելով *թակլիդին* (նախորդ սերունդների հեղինակություններին կուրորեն հետևելու սկզբունքին):

Բազմաթիվ հեղինակներ¹⁶ անդրադարձել են Նահջ ալ-բալադային և փորձել են ցույց տալ տվյալ հավաքագրած նյութի Ալի իբն Աբի Տալիբին պատկանելու հարցը, բազմաթիվ պատմական աղբյուրներում հիշատակումների, պարզապես նախկինում գրի առնված նյութի հետ համեմատություններ անցկացնելու ճանապարհով:

Միննույն ավանդույթի շրջանակներում բովանդակության ձևափոխման սկզբունքի հարցը հնարավոր չէ քննարկել առանց հեղինակի հեղինակային զարգացման հարցերի, իսկ նյութի աբեռացիայի սկզբունքը հնարավոր չէ քննարկել առանց տվյալ հեղինակի կողմից

հարցի շուրջ, անջատվեց (մեկուսացավ) Հասան ալ-Բասրիի շուրջ հավաքված ալիմներից: Մութագիլիականությունը ձևավորվել է այն շրջանում, երբ ումման, որի հավատացյալների էթնիկական և ռասայական պատկանելությունը, մշակութային ժառանգությունը, քաղաքակրթական մակարդակը և միջավայրի ու կյանքի պայմանները սկզբունքորեն տարբերվում էին Մադինայի ումմայի հատկանիշներից, նոր իրավիճակին ադապտացվելու խնդիրները լուծելու համար պետք է նորովի գիտակցեր կրոնի և հավատի նկատմամբ առաջացող հարցերը: Մութագիլիականությունը առաջարկեց այս հարցերին պատասխանելու համար ռացիոնալիստական մոտեցումներ:

¹⁵ Հովհաննիսյան Դ., «Իդեալական մարդու» փնտրտուքներում. Մուրուվայի հայեցակարգի փոփոխությունները Ջահիլիայից մինչև աղաբի ձևավորում, Արևելագիտության հարցեր, հ. XI, Երևան, 2016, էջ 6-17:

¹⁶ Նահջ ալ-բալադայի աղբյուրագիտական կարևորագույն աշխատություններից են՝ Abd al-Zahrā Husaynī al-Khatīb, *Masādir Nahj al-Balāghah wa Asānīduh*, Beirut, 1988 («Նահջ ալ-բալադայի աղբյուրները և նրա խննդները») (Բեյրութ, 1988) և Kāshif al-Ghitā Madārik Nahj al-Balāghah Աբդ Ալլահ Նի'մայի «Մադարիք Նահջ ալ-Բալադա» (Նահջ ալ-բալադայի փաստագրական աղբյուրները) (Բեյրութ, 1972) և այլ բազմաթիվ բազմահատոր մեկնաբանություններ:

այդ նյութի ընտրության և կառուցվածքային կազմը հաշվի չառնելու: Չէ՞ որ յուրաքանչյուր հեղինակ ունի տվյալ տեքստի իր ընկալումը, իմաստավորումը և մեկնաբանությունը: Ալ-Շարիֆ ալ-Ռադիի կողմից Նահջ ալ-բալադայում ասությունների հավաքագրումը և ալ-Ջահիզի կողմից ասությունների հավաքագրումը և դրանց տարբերությունները ցույց են տալիս յուրաքանչյուր հեղինակի կողմից տեքստի ընկալման, իրենց իմաստավորման և «սեփական» մեկնաբանության՝ մոտիվացիաների տարբերությունները:

Այժմ լեզվական կառուցվածքային առումով ներկայացնենք ֆոլկլորային տեքստի բաղադրիչները: Դրանք են՝

- Նախադասության մաս կազմող կառուցվածքային միավոր
- Նախադասություն
- Նախադասությունների շղթա
- Նախադասությունների միջին երկարության շղթա՝ սյուժետային տեքստ

• Նախադասությունների երկար շղթա՝ հեքիաթներ, պատմական ավանդույթ

- Հարց ու պատասխան¹⁷

Վերոնշյալ տեսական դրույթներից ելնելով՝ հոդվածում ներկայացվում է *Նահջ ալ-բալադայի* և «Հարյուր խոսքի»՝ «*Մի՛ աթ քալիմայի*» կառուցվածքային առանձնահատկությունները, բովանդակային որոշ նկատառումներ և համընկնումները:

Նահջ ալ-բալադայում ասությունները՝ իմաստությունները, ներառում են հիմնականում լեզվական կառուցվածքային տեսակներից մի քանիսը՝ նախադասությունը, նախադասությունների շղթաները (մասնավորապես միջին երկարության շղթաներ)՝ որպես խրատական իմաստություններ, և հարց ու պատասխանը:

Ալ-Ջահիզի հավաքագրած «Հարյուր խոսքը/ասացվածքը» բացառապես մեկ նախադասությամբ արտահայտված ասություններ են և հիմնականում արտահայտում են վարվեցողության, բարոյաէթիկական

¹⁷ Пермяков Г. Л., նշվ. աշխ., էջ 34-35:

բնույթի խրատներ, որոնք նաև արժեքավոր նմուշներ են *աղաբի* տեսանկյունից: 8-րդ և 9-րդ դարերում *աղաբը* վերաբերում էր Աբբասյան դարաշրջանի ազնվականներին ու պալատական հատուկ էթիկետին, ինչպես նաև գրագրի՝ քաթիբի պարտավորություններն էին: Աղաբը նշանակում էր հասարակական և անհատական բարոյական առաքինությունների ամբողջություն՝ քաղաքավարություն, ազնվական ուսումնառություն, պատշաճ շարժում, նրբանկատություն, նրբագեղություն, ներողամտություն ընկերների հանդեպ, նուրբ ճաշակ, բազմագիտակություն և գրական ձիրք: Աղաբը ենթադրում էր աշխարհիկ մշակույթ՝ արտացոլելով արաբամուսուլմանական հասարակության համար ճիշտ ապրելակերպի ուղեցույց հանդիսացող բարոյական նորմերը, կրթված լինելու սկզբունքները և սոցիալական վարքագիծը, ինչպես նաև այն արժեքները, որոնց վրա պետք է հիմնվի մարդկանց միջև հարաբերությունների մոդելը¹⁸: Աղաբի տարբեր տեսակների առաջացման իրական նպատակը համարվում էր «մուսուլմանի կրոնական պահվածքի, նրա բարոյականության և կուլտուրայի կանոնների սահմանում»¹⁹: Իսկ ալ-Ջահիզը (775-868 թթ.) համարում էր, որ «Աղաբը հանդիսանում էր բարոյական դաստիարակություն կամ էլ ավանդույթի փոխանցում», իսկ «*Մուալլիմը*՝ աստվածաբան գիտնականը սերում է *հլմ*՝ կրոնական գիտելիք բառից, իսկ կրթողի/դաստիարակողի՝ *մուաղղաբի* իմաստը աղաբից է», համարելով, որ «կրոնական գիտությունը «բունն» է, հիմքը, իսկ աղաբը «ճյուղն» է, վերնաշենքը»²⁰:

¹⁸ Լապիդուսը նաև գտնում էր, որ աղաբն իսլամի ծագումից հետո ձեռք է բերում նաև անքակտելի մաս կազմող հոգևոր-կրոնական կողմը: Նա գրում է, որ «իր առավել լայն կրոնական իմաստով՝ աղաբը մուսուլմանական գաղափարների համակարգի մի մասն է, փոխհարաբերվող հայեցակարգերի լրակազմի մի մաս, որ կազմում է իսլամական հավատի բառապաշարը և ստեղծում է մարդու մուսուլմանական մարդաբանությունը», Lapidus I., նշվ. աշխ., էջ. 38-40:

¹⁹ Пелла III., Вариации на тему адаба, в кн. Арабская средневековая культура и литература, Москва, 1978, с. 61.

²⁰ Նույն տեղում, էջ 64, al-Mawrad 7/4, Baghdad, 1978, p. 152.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտողները համարում են, որ ադաբի գրականությունը ծագել է բանավոր ավանդույթին փոխարինելու եկած ադաբի հիմքը կազմող վարվելակերպի կանոնների, ավանդական նորմերի և խրատների գրավոր արձանագրման գործընթացին զուգահեռ, նմանապես, գրավոր խոսքի առաջացմամբ և զարգացմամբ ֆոլկլորի տեսակները նույնպես զարգանում էին զուգահեռաբար և ազդում ու ազդեցության էին ենթարկվում գրավոր խոսքից:

Այս ամենի համատեքստում հետաքրքրական է, որ արաբ գրող, ադաբի գրականության ամենաակնառու ներկայացուցիչներից և իսլամի մութագիլիական ռացիոնալիստական ուղղության հետևորդ Աբու Ուսման Ամր իբն Բահր ալ-Ջահիզին (767-868) է վերագրվում Ալի իբն Աբի Տալիբի 100 իմաստությունների հավաքագրումը: Ալ-Ջահիզը ծառայում էր Աբբասյանների արքունիքում և հայտնի էր որպես իր ժամանակի ամենակրթված, ամենագիտակ մարդկանցից մեկը, իր ստեղծագործական կյանքում աչքի էր ընկնում բազմակողմանիությամբ, գիտելիքների մեծ պաշարով և լայնախոհությամբ:

Ըստ ավանդույթի՝ կրոնագետ և գրականագետ, Աբու Նասր Մուհամմադ իբն Սուլեյման իբն Մուհամմադը փոխանցել է մեզ, որ կրոնագետ Աբդ ալ-Ուսհիդ իբն Ահմադ ալ-Քիրմանին ասել է իրեն, որ Աբու Բաքր Հիբաթ Ալլահ ալ-Ալլաֆը, որը դատավոր էր Շիրազում, ասել է իրեն, որ Աբու Բաքր Մուհամմադ իբն Ալ-Հասան ալ-Դուրայդը ասել է իրեն, որ Աբու ալ-Ֆադլ Ահմադ իբն Աբի Տահիրը, որը Ուսման ալ-Ջահիզի ընկերն էր, ասել է հետևյալը՝

«Տարիներ շարունակ ալ-Ջահիզը մեզ ասում էր, որ հավատացյալների էմիր Ալի իբն Աբի Տալիբը հարյուր ասացվածք է ասել, որոնցից յուրաքանչյուրն ավելին արժե քան արաբների ստեղծած հազար ասացվածքը: Ես խնդրել եմ նրան մի քանի անգամ հավաքել և թելադրել դրանք ինձ: Նա խոստացել էր դա անել, բայց կարծես միտումնավոր մոռացության էր մատնում, սակայն, նրա կյանքի վերջին օրերից մի օր նա իր նախկին ձեռագիր գործերն է առաջ բերում, հավաքում է

դրանցից այդ խոսքերը, դուրս է գրում իր ձեռքով և դրանք տալիս ինձ»²¹:

Այժմ վերլուծենք ալ-Ջահիզին վերագրվող հարյուր ասացվածքների որոշ կառուցվածքային և իմաստային բեռնվածքները:

Ինչպես արդեն նշվել է, դրանք բացառապես մեկ նախադասությամբ արտահայտված իմաստություններ են՝ հաստատական, բացասական, ժխտական, անվանական ժխտական նախադասություններ: Եթե կառուցվածքային առումով փորձենք առանձնացնել ապա մեծամասնությունը՝ մոտ կեսը, կազմում են պարզ հաստատական նախադասությունները:

Քսանմեկ ասույթ (13-32, 68) կազմված են անվանական նախադասության հետևյալ կառույցով՝ (*Հա... մին*):

Տասնմեկ նախադասություն՝ (6, 7, 45, 50, 57, 59, 64, 75, 88, 90, 93) սկսվում են արաբերեն ով (*ման*) բառով, ինչը նշանակում է, որ երրորդ դեմքով են և կրկին վերաբերում են մարդուն և նրա գործունեությանը:

Յոթ ասույթ (44, 80-84, 87) սկսվում է ածականի գերադրական աստիճանով և արտահայտում է որոշակի երևույթի կամ գործողության ամենան լինելու հանգամանքը:

Վեց նախադասություն (38, 76, 77, 89, 94, 95) սկսվում են արաբերեն *իզա* (եթե) արտահայտությամբ՝ կրկին արտահայտելով այս կամ այն երևույթի վերաբերյալ դատողություններ:

Հինգ նախադասություն էլ սկսվում է արաբերեն *ռուբա* (հաճախ, բազմաթիվ անգամ, հնարավոր է) արտահայտությամբ:

Հաստատական նախադասություններից որոշներն էլ սկսվում են *մարդիկ* բառով, որը կրկին ու կրկին ցույց է տալիս, որ իմաստային առումով բեռնվածքը հիմնականում պտտվում է մարդու, նրա որակների, հատկանիշների, գործողությունների շուրջ:

²¹ Al-Qudā'ī Al-Qādī, A Treasury of Virtues: Sayings, Sermons, and Teachings of 'Ali, with the One Hundred Proverbs attributed to al-Jahiz, (ed. and trans. Tahera Qutbuddin), New York and London, New York University Press, 2013, p. 220-221.

Հետաքրքրական է, որ նշված բոլոր օրինակներից էլ, (թեև ալ-Ջահիզի հավաքագրածներից ոչ բոլորը) առկա են Նահջ ալ-Բալադայում և՛ նույնությամբ, և՛ նույնական կառույցների կիրառմամբ բովանդակային նմանօրինակներ են: Սակայն ինչպես նշեցինք, ի տարբերություն ալ-Ջահիզի «Հարյուր խոսքի», Նահջ ալ-Բալադայի խրատների և ասույթների/իմաստությունների բաժինը քանակային առումով գերազանցում է: Դրանք 480 են, հետևաբար բովանդակային առումով էլ բազմաբովանդակ են և կառուցվածքային տարբեր ձևերով արտահայտված՝ մեկ նախադասությունից մինչև մեկ կամ երկու էջ:

Ստորև աղյուսակով ներկայացվում է ալ-Ջահիզի հարյուր իմաստությունների համընկնումները՝ նույնությամբ կամ որոշակի տարբերություններով Նահջ ալ-Բալադայի իմաստությունների հետ:

Նահջ ալ-Բալադաա (ալ-Շարիֆ ալ-Ռադի)	Հարյուր իմաստություններ (ալ-Ջահիզ)
11	95
13	94
19	93
26	96
40	99-100
41	91, 92
45	84, 86
63	39
71	38
80 (երկար տարբերակ)	61 (կարճ)
81	5
113 (շատ երկար է)	84 (փոփոխված), 83, 26
148	7
149	4 (մի փոքր հատված)
214	90 (այլ կառուցվածք ունի)
226	85
246	86
336	43
371	27, 28, 29, 62

Այստեղ կարևոր մի հանգամանք կարելի է դիտարկել. ալ-Ջահիզի կողմից հավաքագրված կամ նրան վերագրվող հավաքածուի և Նահջ ալ-բալադայում հավաքագրված իմաստությունների համընկնումները վկայում են բանավոր ավանդությունում դրանց տարածվածության և ընդգրկունության մասին, իսկ գրի առնելու նպատակահարմարությունն արդեն՝ ըստ հեղինակի ընտրության չափանիշների: Կան նաև այլ աղբյուրներ, որոնցում այս նույն ասացվածքները կամ նմանատիպ ասացվածքները համարվում են Ալի իբն Աբի Տալիբի կողմից արտասանված բովանդակություն²²:

Ինչպես նաև կարևոր է ևս մեկ անգամ շեշտադրել, որ դարերի ընթացքում այս կամ այն «տեքստը» որպես Ալի իբն Աբի Տալիբին պատկանող նյութ է տարածվել հետագա սերունդների համար, ապա այն արդեն որպես բովանդակություն է կարևորվել ընթերցողների շրջանում և հատկապես շիայական տասներկուական համայնքի համար: Նրանք Նահջ ալ-բալադան համարում են Ղուրանից հետո երկրորդ «սուրբ գիրք»: Իսկ իմամականության համատեքստում այն ներքին՝ *բասիդ* իմաստների մեկնությունն է հավատացյալների համար, որի իրավունքն ունեին միայն Ալին և նրա ընտանիքի անդամները՝ *Սիլ ալ-բեյթը*:

Թերևս այստեղ կարելի է մեջբերել հայտնի մութագիլի Նահջ ալ-բալադայի կարևորագույն և հսկայածավալ մեկնաբանության հեղինակ Իբն Աբի ալ-Հադիդի (մահ. 1258թ.) «*Շարհ Նահջ ալ-բալադա*» աշխատությունից հետևյալ խոսքերը՝ «Իմամի խոսքերն արարչի խոսքերից ցածր են, բայց բարձր բոլոր արարվածներից»²³: Շիայական կրոնափիլիսոփայական դավանաբանության հիմքում ընկած այս

²² Al-Qudā'ī Al-Qāḍī, նշվ. աշխ.: Հետագայում կարևոր է նաև ուսումնասիրել Ալի իբն Աբի Տալիբին պատկանող նյութի համընկնումները ալ-Քուդայիի և ալ-Ռադիի հավաքագրած աշխատություններում:

²³ Ibn Abī al-Ḥadīd, Sharḥ Nahj al-Balāgha, Vol. 1, Cairo (1959-1964), p. 24. Այս միտքը կարելի է հանդիպել ավելի ուշ շրջանի գրեթե բոլոր մեկնաբանների և հետազոտողների աշխատանքներում:

միտքը ցույց է տալիս, որ իմամների խոսքերը և իմամությունը Մուհամմադ մարգարեի միջոցով Ալլահից ստացված ուղերձներից՝ Ղուրանից՝ Ալլահի ուղղորդած ճանապարհից հետո երկրորդ «հեղինակավոր խոսքը և ճանապարհն» է:

Այսպիսով, Նահջ ալ-բալադայի ասույթների և ալ-Ջահիզի կողմից հավաքագրված «Հարյուր խոսքի» համեմատությունը ցույց տվեց, որ ասույթները, որոնք Ալի իբն Աբի Տալիբին են վերագրվում՝ հանդիսանալով ինվարիանտներ՝ տարբեր իրավիճակներում և տարբեր հեղինակների կողմից վարիանտների և ինվերսիաների են վերածվում և արդեն տվյալ կերպ ամրագրվում են տարբեր չափանիշներով և նպատակներով հավաքագրված ամբողջական ժողովածուներում:

TATEVIK MKRTCHYAN
(YSU)

**THE EXAMINATION OF THE CONTENT AND
COMPOSITION OF THE SAYINGS AND VIRTUES OF IMAM
ALI IBN ABI TALIB IN NAHĠ AL-BALĀĠĀ**

Nahġ al-Balāġa (lit. Way/Path/Peak of Eloquence) is a “collection of fragments of sermons and speeches, letters, homiles and maxims” attributed to the first Ithna‘ashari Imām and the fourth al-Ĥulafā’ al-Rāšidūn, Amīr al-Mū‘minīn, ‘Ali ibn Abī Tālib, (600-661) compiled by Al-Šarīf al-Raḡī (970-1015/1016) one of the prominent scholars and poets of the Būyid period (945- 1055).

In this article we examine and discuss some issues of structural and contextual peculiarities of ‘Ali ibn Abī Tālib’s homiles and maxims in Nahġ al-Balāġa. Moreover, the comparative analyses of One Hundred Proverbs (Mi’at kalimah) of ‘Alī attributed to the compilation of al-Jāhīz (d. 255/869) and homiles of Nahġ al-Balāġa reveal interesting coincidences between these two compilations.